ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«21» Հոկտեմբերի 2024թ. N 96-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 42/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 19-ի N 1826-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 23-րդ և 24-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Երևան քաղաքի Առնո Բաբաջանյան փողոցի N 42/5 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրի 476 շահառուների (այսուհետ՝ Շահառուներ) կողմից ավտոկայանատեղիների վիճակահանության մասնակցության ապահովման համար ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) գանձապետական ավանդային 900018009655 հաշվին 400,000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի վճարման վերջնաժամկետ սահմանել 2024 թվականի դեկտեմբերի 5-ը:
2. Հանրային ծառայողներին բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում 700 ավտոկայանատեղիների վիճակահանությունը մեկնարկել 2024 թվականի դեկտեմբերի 12-ին՝ ժամը 10:00-ին:
3. Հանրային ծառայողներին բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում մինչև վիճակահանության կազմակերպումը Շահառուների կողմից ցուցակից

դուրս գալու և 400,000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի վերադարձի մասին գրավոր դիմում ներկայացնելու վերջնաժամկետ սահմանել 2024 թվականի դեկտեմբերի 10-ը:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Կոմիտեի կայքում պաշտոնական հրապարակման օրվանից:

21.11.2024

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133 Ե.ՎԱՐԴԱՆՅԱՆ